ՓԱՍՏԵՐ, ԹՎԵՐ, ԴԵՊՔԵՐ...

Լենհաստանում ստեղծել են մի ապարատ, որը թեքեացուցս է հուշարարի աշխատանքը: Փոքրիկ ընդունիչը դնում են դերասանի ականջի ետևում, իսկ անտենան՝ կեղծամի մեջ: Եվ դերասանն արդեն կարող է լսել հուշումը ոչ միայն հուշարարական խցիկի մոտ, այլև բեմահարթակի ցանկացած վայրում:

* *
*

Ամեն տարի երկրագնդի վրա թափվող երկնաքարերի քաշը պատկառելի մի թիվ է կազմում՝ մինչև 30 մլն տ: Այս ավյալն ստացվում է արհեստական արբանյակների օգնությամբ: Մինչև այժմ ենթադրում էին, որ երկրագնդի վրա ընկնող երկնաքարերի քաշը տարեկան չի անցնում 1000 տոննայից:

* *
*



Դինու տարիքը նախկինում որոշում էին մասնագետները և այն էլ միշտ չէ, որ ճիշտ: Վերջերս ԱՄՆ-ում երևան եկավ մի տարր, որի օգնությամբ կարելի է ճիշտ և անսխալ որոշել գինու, օղու, կոնյակի, ռոմի տարիքը: Այդ տարրից ներկայումս օգտվում են մաքսատան ծառայողները (գինու տարիքից է կախված մաքսի չափը): Մամուլում չի հրապարակված թե ի՛նչ սկզբունքով է աշխատում այդ տարրը:

* *
*

Տիեզերանավերի մասերի հուսալիությունը գերազանցում է այն բոլորը, ինչ մարդիկ ստեղծել են մինչև այսօր: Համեմատության համար կարելի է ասել, որ եթե հեռուստացույցի սովորական մասները այդքան հուսալի լինեին, ապա այն անխափան կարող էր աշխատել 25 հազար տարի:

ԲԻՈՀՈՍԱՆՔՆԵՐ...

— Ձեր ի՞նչն է:

— Առաձնեբս:

— Հիմա կնայենք: Այդպես... պակասում են երկու կորիչները: Ինչպիե՞ առամներ եք ցանկանում:

— Սովորական, սպիտակ:

— Ես այդ մասին չեմ հարցնում: Դուք կաթնատամնե՞ր եք ուզում, թե՞ արմատատամներ:

— Ներեցեք, չեմ հասկանում:

— Մենք պրոտեզներ չենք դնում, այլ աճեցնում ենք նոր առամներ: Դա ամենանոր մեթոդն է: Լենգերին մոտեցնում են մագնիսական ժապավենի վրա ձայնագրված գոնորի բիոհոսանքները, որի մոտ առամներ են պետք գալիս: Դրանց ներգործությամբ հիվանդի մոտ սկսվում է առամների աճը: Կաթնատամներ կարելի է աճեցնել մի սեանսում, իսկ արմատատամները, ձեր լենգերի դեպքում կպահանջեն երեք սեանս: Եթե դուք շատ չեք շտապում, ապա խորհուրդ կտայի, համենայն դեպս, արմատատամներ: Ճիշտ է, դա փոքր-ինչ ավելի ցավոտ պրոցեդուրա է, բայց հետո Ձեզ կարող եք ծամել ինչ կամենաք:

— Դե՛ լավ, թող լինի արմատատամներ:

— Հիանալի՛: Հիմա կընտրենք ժապավենը: Այսպես, վերին երկու կորիչները: Ահա՛: Դոնոր Վասիլև, վեց տարեկան: Թամարա՛, ձայնագրանից հաներ ժապավենը: Ավելի լայն բաց արեք բերանը: Հիմա մենք լենգերին կամրացնենք կոնտակտները: Մի փոքր բարձրացրեք գլուխը: Ժապավենը գտա՞ք:

— Ահա, այն:

— Հագցրեք մագնիսոֆոնին: Հազարդարեք միացրեք հիվանդին: Պատրա՞ստ է:

— Այո՛:

— Հիմա հանգիստ նատեցեք, միացնում եմ:

— ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ...

— Ինչպե՞ս եք ձեզ զգում, հիվանդ:

— Նատում սա ուզ առած է:

digitised by A.R.A.R.@